

ՄԻ ՊԱՏԿԵՐ ԱԻԱՐԱՅՐԻՑ

Տեսարանը ներկայացնում է Աւարայրի դաշտը, մեծ հա-
կասամարտից յետոյ. ամեն կողմ ցրած են փերած նիզակներ,
զրահ, սուսեր ու սաղաւարտ: Բարձր խոտերի միջից երբեմն լըս-
ւում են դեռ հոգեվարժի մէջ գալարող մահամեծների խուլ
հռնդիւնը եւ բազում ֆաջեր ֆնած են յախեննական ֆնով, սեղ
սեղ բարեկամաբար իրար ձեռք բռնած. մի ֆարի յետն պառ-
կած են երկու հակառակորդներ, սուր մագիլներով իրար կո-
կորդ սեղմած: Տիրում է մեռելային խորը լռութիւն երբեմն՝
հետուններից լսող մի հառաչ կամ աստղերին նետած հրածեսի
կցկցօւր բառեր, որ գալիս են լռութիւնը խզելու: Հեռուն, բլու-
րի լանջին, պարսւած յաղթականների վրաններն են, որոնց առջև
մարող կրակներն իրենց վերջին ցոլֆերն են սրձակում: Սնեւ
հագած մի երիտասարդ կին, գլխին մի շղարօ եւ ձեռքին մը-
խացող խունկը, աղօթք մամնջալով առաջանում է դանդաղ:
Աներեւոյթ հոգիները ժտուր ու մեղմ մի մեղեդիով կարծես
մասնակցում են նրա աղօթքին:

ՇՈՒՇԱՆԻԿ

*Եկել եմ, հա՛յր իմ, քեզ որոնելու գիշերւայ մէջ խաւար,
եկել եմ արցունքով ցօղելու դէմքդ պաշտելի և շրթունքնե-
րով սպեղանի դնեմ թարմ ու մխացող վէրքերիդ վրայ: Ո՛վ
քաջեր հայոց, որ վասն հայրենեաց ասպետօրէն ձեր կեանքը
տւիք, որպէսզի կոյսերը հայոց մնան անարատ, որպէսզի*

հաւատքը միշտ ճառագայթի մեր տաճարներում. ահա եկել եմ ձեր յիշատակին յաւէտ օրհնւած, ես խունկ բուրբիւր: Մայր հողն է գրկել ձեր մարմինն հողէ, բայց ձեր հոգիներն անմահ, լուսաւոր, թեւածում են հպարտ, հայոց երկնքում: Հաւատքի, հայրենիքի համար ընկաք բոլորդ. հայրենիքիս պէս ես էլ սգաւոր, հանգիստ եմ կարդում ձեր ոսկորներին ու փառք եմ տալիս ձեր հոգիներին: Անողորմ լուսի՛ն, մի շող արձակիր, աղօտ լոյսիդ տակ ես գտնեմ հօրս, վիշտս դատարկեմ իր կրծքի վրայ: Ձայն տուր, հա՛յր, ձայնիդ եմ կարօտ, ասա՛, ո՞րտեղ ես ընկած, ծարա՞ւ ես գուցէ, սրտիս բաժակով քեզ ջուր եմ բերել: Տէ՛ր, քայլերս առաջնորդիր, անդունդները լուսաւորող Տէ՛ր... Քայլում ե մթուրեան մեջ եւ այլեւս չի նրնում, Բարձրադիր մի վրանի սակից դուրս ե գալիս մի մարդ, արժաթե կրծկալով, հակսին ոսկե ապարօտ, ոսկեին նրկարաւ վիզ կարմրագոյն կօշիկներ, ամբողջովին փաթաթւած է դեղնագոյն մի ծիրանիով: Դանդաղ քայլերով առաջ է գալիս սրխուր ու զայրացկոտ հայնացք նետելով իր շուրջը: Ամեն մի թուփի շարժումից ցնցում է ընդոս: Գալիս, կանգնում է մի բարձր հողաբմբի վրայ եւ լուսնի աղօտ լոյսի սակ զննում է դաշտը, ձեռները խաչածնել է կրծքին, նրբեմն ցաւագին հառաչում է, աշխարհը կորցրած մարդու ափսոսանքով — հայոց մարգպանն է նա, հայրենադաւ Վասակ Սիւնին:

ՎԱՍԱԿ

Եւ ի՞նչ անուն տալ այս աւերածութեան, մարդկային կեանքի այս զուր կորուստին, եթէ ոչ տգիտութիւնից ժայթքած մի շարիք: Գոռոզ, անհեռատես Մամգունի, վե՛ր, վեր կա՛ց ու նայիր, ահա պատկերը քո սխրագործութեան: Ո՞ւր է այրուձիգ, որով այնքան հպարտ էիր դու, ո՞ւր են քաջերը քո դիւցազնածին, վեց հազար մարդով ասպարէզ կանչել երեք հարիւր հազարանոց հսկայ բանակին, որն առաւել դեռ զօրացած էր փղերի անառիկ բուրգերով: Քանզի մնացած վաթսուն հազարդ գրաստաբնոյթ շինականներից մի հորդան էր անվարժ կանոնա-

ւոր ռազմի, բոկոտն ու անգէն, որի միակ առաքինութիւնը կոյր մոլեռանդութիւնն էր: Խե'նթ Տարօնցի, արհամարեցիր Արեաց արքայի կամքը, վանեցիր խորհուրդներս իմաստուն, ենթարկւեցիր անգիջող կղերի անմիտ յորդորին և Աշխարհն Հայոց առաջնորդեցիր զէպի կործանում:

Անւանարկեցիր ազնւականութիւնը, եղբայրացնելով անագատի հետ, «էլ մեր մէջ չկայ ո'չ տէր, ո'չ ծառայ, Հօն» զէպի ռազմազաշտ, հաւատքի համար և յանուն խղճի ազատութեան», գոչեցիր: Անմիտ և մոլեռանդ հորդանները ոչխարի նրման հետեցին քեզ: Դու յարմար էիր սքեմ կրելու և ճգնելու մի քարայրի մէջ, ոչ թէ դառնալու Զօրավար Հայոց: Իսկ ի՞նչ է խիղճը, Ղևոնդ Երէցի հոգու մերկութիւնը ծածկող մի քուրջի կտոր, և հաւատքը ձեր, Անակի որդու օտար աշխարհից բերած մի ցնորամտութիւն: Քո խիղճն ու հաւատքը չփրկեցին քեզ, Սպարապետ Հայոց: Եթէ լինէիր ինձ հետ միաբան, հնազանդ խօսքիս և հրամաններիս, մենք կը փրկէինք Հայոց Աշխարհը: Արդարասիրութեամբ չեն աշխարհակալում, խաբկանքն է միայն աշխարհօրէն յաջողելու գէնքն ու բանալին: Խաբի'ր ու քծնի'ր, կեղծի'ր ու սողայ զօրաւորի առջև, քո որդուն անգամ պատւանդան շինիր ու բարձրացիր վերև: Երբ հարկ է, դու բռնակալի ոտքերը լիզիր, որպէսզի ինքզ էլ մի օր ուրիշներին ստիպես զարշապարդ համբուրեն: Սուրբ մարդուն ինչ՝ աշխարհը վարել: Աշխարհ վարողը չի տատանւի եղբօրն սպանել, երբ իր շահն է պահանջում, կնոջը նետել ժայռերից անդունդ, իր որդուն ծախել, ուրանալ մօրը և սին ազգութիւն: Խելք ու խոհեմութիւն չունեցար երբէք, սպարապետ հայոց: Ես ուզում էի ատրուշաններ հաստատելով կուրացնել Արեաց արքային, որ յետոյ ատամները քաշեմ, դու խանգարեցիր, տուժում ես հիմա, տուժում է քեզ հետ համայն Աշխարհն Հայոց: Ռազմի դաշտերում ծերացած, քաղաքականութեան մէջ միշտ տգէտ մնացիր: Անկարող էիր դու երկիր վարել և չը թողեցիր, որ ես վարէի: Եւ դրա համար պիտի ես ջնջեմ տոհմդ ու անունդ աշխարհի վրայից, մենք արդէն ման-

կուց ոսոխներ էինք, բախտը մեզ որոշել էր իրար ջնջելու: Քո յաղթանակը իմ մահն էր արդէն և շթողեցի որ յաղթանակես: Կատաղի գրոհդ սարսեց թշնամուն, և յաղթանակը թառում էր արդէն վահանիդ վրայ, պատմութիւնն էիր դու յեղաշըջում, Արեաց բանակն արդէն պատրաստում էր նահաջի փողերն հնչեցնել, և դառնում էիր դու աւելի մեծ քան բոլոր մեծ արքաները, նախանձը բորբոքեց իմ մէջ, և ես կռնակիդ դաշոյնի դաւաճան հարւածն իջեցրի, իմ քաջ սիւնեցիք քո շինականներին հողմերի նման ցրիւ տւին, փոխեցի ուղմի բախտը, և հպարտանքով կարող եմ ասել, ես փոխեցի պատմութեան էջը, կասեցրի յաղթանակդ, որ հասնեմ գահին... Արդե՞օք կը հասնեմ... Արքայական ծիրանին ծածկելու է արդե՞օք տարիների իմ գործած չարիքը և հոգուս զարշութիւնները... ձակասն է շփում յուսահաս: Սակայն քո մահով իսկ ինձ փրկուածիւն չը կայ, կրքերի անողոք յորձանքն ինձ քշեց դէպի խաւարը: Մեռար դու դիտմամբ, որ ինձ յաւիտեան տապալես, մեռար որ մտնես հայութեան հոգու մէջ ու պաշտես որպէս սուրբ, և ինձ դիմադարձ կանգնես և բնդմիշտ խափանես ճամբաս դէպի գահը, իմ դէմ հանես ամբողջ Աշխարհն Հայոց: Յազկերտն է մնում իմ միակ յոյսը, թէ որ ցանկացաւ, արքայ եմ արդէն հակառակ ժողովրդիդ կամքին... բայց կը ցանկանայ արդե՞օք, գուցէ Արեաց արքայի հոգու մէջ էլ ես թառել, ինչպէս ծանր նստել ես Մուշկանի սրտում... Յուսահաս: Ոչ քեզնից ազատում չկայ, սպարապետ հայոց, ա՛խ, եթէ կարողանայի քո հոգին բռնել, ճգմել ու ոչնչացնել.. Բայց իմ կրծքի տակ էլ ծանր թառել ես ԴՈՒ, ուզում եմ քեզ գուրս նետել իմ հոգու միջից, սակայն չեմ կարողանում... Ձեռքով չանգոսում է կուրծքը, գրեթէ աղաղակով: Բա՛ւ է, ինձ հանգիստ թող, հեռացի՛ր ինձանից, ի՞նչ ունես դու իմ հոգու հետ... Խորհակամ գոսում է մի քարի վրայ, գլուխն առնում ձեռքերի մէջ: Ոսփ թնթել ձայն է լսում, սրափում է սարսափով, տեսնում է մի կին տրշում է մեռելների մէջ, զարհուրած նայում է նրան: Նորից երևում է շուշանիկը աղօթք մրմնջալով եւ խունկ ծխելով:

ՇՈՒՇԱՆԻԿ

Ա՛խ, ո՞ւր ես, հայր իմ, ո՞ր թփի տակ, յոգնած եմ, շրջել եմ ամբողջ գիշերը, գուցէ քաջերդ քեզ տարան Մասսի բարձունքները, թող գոնէ քո հոգին տեսնեմ, թէկուզ աստղերի մէջ... Ձննում է մի զինուորի: Այդ պահին Վասակը կանգնում է նրա դիմաց:

ՎԱՍԱԿ

Կոպիտ: Ո՞վ ես դու, կի՛ն, և ի՞նչ ես անում դու մեռելների մէջ:

ՇՈՒՇԱՆԻԿ

Առանց վախենալու կանգնում, նայում է Վասակին: Իսկ դո՞ւ, դու ո՞վ ես, մի իրական մա՞րդ, թէ մի ուրւական:

ՎԱՍԱԿ

Շփուկով եւ սիրական: Ես, ես հայոց...

ՇՈՒՇԱՆԻԿ

Մօտենալով աչքերը յստում է նրա դեմքին: Հեզակական: Ճանաչեցի՛ էլ մի շարունակիր, դու հայոց ԴԱԻԱՃԱՆԸՆ ես:

ՎԱՍԱԿ

Բռունցքները սեղմած փայլում է դեպի նա: Լո՛ի՛ր, դ՛ու ոգի չար, ես արքան եմ հայոց...

ՇՈՒՇԱՆԻԿ

Արքայ, հա, հա... աւերածութեան ու մեռելների արքան, այո՛: Արհամարհում եմ հրամանդ ու սպառնալիքդ, ո՞վ շինծու արքայ, արքաների դու ստոր ծաղրածու: Արեաց բանակը մեզ ան չի ազդել, հիմա քեզնից պիտ վախենամ, դու գիշատիչների դէմ մի խրտուխլակ ես:

ՎԱՍԱԿ

Կասաղի: Լոի՛ր, Լոի՛ր....

ՇՈՒՇԱՆԻԿ

Թէ ես էլ լոեմ, ազադակելու է աշխարհը համակ, լեռներն ու ձորերն են ազադակելու, որ դո՛ւ մի դաւաճան ես, դաւաճանների մէջ ստորագոյնը, և աստղերը ամէն գիշեր այդ պիտի պատմեն աշխարհներին: Ծաղրական: Արքայ հայո՛ց, ի՞նչու երզումդ դրժեցիր, ի՞նչու մատնեցիր Հայրենին արեան ու կրակի:

ՎԱՍԱԿ

Ընկնւած: Մի խօսի՛ր, բայց ո՞վ ես դու, դու ի՞նչ գիտես: Ես մատնեցի, թէ՞ այն գոռոզ մարդը, որ կոչւում էր սպարապետ հայոց և դիմադարձ կանգնեց Արեաց արքային, չը կշոնեց մեր ոյժն ու կարողութիւնը, մենակ ու անպատրաստից ելաւ պայքարի, անտեղի սպառեց մեր զօրութիւնը ու մեզ թշւառացրեց ազգովին. նայի՛ր շուրջդ ու տե՛ս:

ՇՈՒՇԱՆԻԿ

Սակայն քե՛զ ի՞նչ աշխարհը հայոց, ժողովուրդն հայոց, դու մի օտար եղար մի՛շտ հոգով: Ե՞րբ ես տառապել ազգութեան ցաւերով, և մեր հոգսերը ե՞րբ են քեզ տանջել: Յանկուութիւնդ է եղել վաճառել մեզ, անգամ մեր հոգին, որպէսզի նստես Արշակունեաց գահին: Հիմա էլ կանգնել ես ու դորձած չարիքդ վերագրում ես ուրիշին, զգո՛յ՛, մեռելները կը բարձրանան յանկարծ և արիւն կը փսխեն երեսիդ, նրանք, որ իրենց վերջին շունչը փչելիս անիծել են քեզ: Խլացե՞լ ես միթէ, հազար-հազար մարդ մոխրի վրայ նստած նզովում են հայոց մարդպանին: Մի կտոր մետաղի համար մարդ այսքան չարիք կը գործի՞:

ՎԱՍԱԿ

Ես չեմ եղել պատճառն այս արհաւիրքի, այլ սպարա-

պետը, որ չանսաց խոհեմ խորհուրդներին: Չարը հզօր էր, պէտք էր համակերպել:

ՇՈՒՇԱՆԻԿ

Սակայն մինչ ի՞նչ աստիճան, երբ չոր հացն անգամ կտրել էին խեղճ շինականի բերնից, երբ քանդում էին մեր տաճարները և մեզ ստիպում կրակին պաշտել, երբ ուզում էին հանդցնել մեր հոգու ու մտքի լոյսը...

ՎԱՍԱԿ

Խոհեմութիւն էր լռել, համբերել:

ՇՈՒՇԱՆԻԿ

Համբերե՞լ, երբ մեր Աստծուն էին փորձում գահընկեց անել...

ՎԱՍԱԿ

Հեզմակալան: Իսկ այդ Աստուածը, որի համար այդքան զոհ տւիք, ի՞նչ արեց:

ՇՈՒՇԱՆԻԿ

Այդ Աստուածը խռովեց մեզնից, քեզ նման դաւաճանների պատճառով:

ՎԱՍԱԿ

Եւ յաղթանակը բաշխեց թշնամուն...

ՇՈՒՇԱՆԻԿ

Նա չը բաշխեց՝ այլ դո՛ւ, և քեզ նման ազգուրաց դաւաճանները: Քայքաւել էր Մուշկանի բանակը, եթէ տմարդաբար քո սիւնեցիները թիկունքից չը հարւածէին մեր քաջերին և յաղթանակը նետէին Չարի բերանը, ինչպէս իրենց հոգին են նետում կրակը:

ՎԱՍՍԿ

Շնական հպարտութեամբ: Ուրեմն ես աւելի հզօր եմ
քան ձեր Աստուածը, հետեւէիք ինձ, փոխանակ նրան պաշտելու...

ՇՈՒՇԱՆԻԿ

Ա՛խ, դու՛ պիղծ, դու աւելի չար, քան թէ սատանան. դու՛
նենգամիտ հրէ՛շ, ո՞ւրզում ես արքայ դառնալ ու մեր աշխար-
հը վերածել գեհենի, և ի՞նչի վրայ ես դու ուզում իշխել, այս
մեռելնե՞րի, նրանք քո հողին կը լցնեն զարգանդով, եթէ հողի
ունես դու, չես լսո՞ւմ միթէ նրանց աղաղակը, ահանջ արա՛,
ինչպէս են բոլորը միաբերան կանչում... Կայէ՛ն, Կայէ՛ն, ո՞ւր է
եղբայրդ... Վասակին քում է թէ հազար ձայներ աղաղա-
կում են «Կայէ՛ն, Կայէ՛ն...»:

ՎԱՍՍԿ

Կասաղած, ձեռքը սանում է սրին: Լռի՛ր, եթէ ոչ լե-
զուդ կը կտրեմ ես իմ այս սրով...

ՇՈՒՇԱՆԻԿ

Ա՛խ, քաջին տեսէ՛ք, և ո՞ւր էիր դու, ով հայոց արքայ,
երբ սպարապետն ընկաւ այս ռազմադաշտում, սլացաւ վրագ,
ինչո՞ւ վախկոտ գողի պէս թագնւեցիր փղերի թիկունքում հօրս
սարսափից...

ՎԱՍՍԿԸ

Շուրսած: Հա՞յրդ, բայց ո՞վ ես դու...

ՇՈՒՇԱՆԻԿ

Քօղը երեսից վերցնում է: Դեռ չը ճանաչեցի՞ր, Շու-
շանիկն եմ ես, դուստրը Կարմիր Վարդանի:

ՎԱՍՍԿ

Ընկրկելով, մեղմացած: Լսիր ինձ դստրիկ, գիտեմ, հաս-
կանում եմ քո վրդովմունքը, ծանր վշտից ես այդպէս բար-
բառում, և հօրդ նման անխոհեմ ես դու, այսպէս մեն-մենակ

մեռելների մէջ ու գազանների, եթէ քեզ բռնեն պահակները գարշ... բայց մեծահոգի եմ աւելի քան դու կարծում ես ինձ, ե՛կ գնանք վրանս, կը պատսպարեմ քեզ:

ՇՈՒՇԱՆԻԿ

Արհամարհակա՛ն: Գա՞մ քո վրանը, հայրս երկու անգամ խաբւեց քեզանից, բայց ես չեմ խաբւի: Յիշ՞ում ես ինչպէս Վաղարշապատում ժողովուրդն ուզեց քեզ տրորել իր ոտքերի տակ և հայրս միայն կարողացաւ քեզ փրկել, բայց դու նորէն նրան դաւաճանեցիր: Գա՞մ քո վրանը, որ շղթայ դնես դու իմ ոտքերին և տանես Տիգրոն, ո՛չ, աւելի լաւ է որ գազանները յօշոտեն ինձ, քան ապաստան խնդրեմ մի դաւաճանից:

ՎԱՍՍԿ

Մենակ այս դաշտում, մեռելների մէջ...

ՇՈՒՇԱՆԻԿ

Ո՛չ մեռելների, այլ անմահների՛, եկել եմ նրանցից կորով առնելու, որ շարերի դէմ պայքարեմ անվերջ: Եկել եմ հօրս ճակատն համբուրեմ... եկել եմ քաջերի խրոխտ ձայներն հաւաքեմ, նրանց հոգիներն առնեմ սրտիս մէջ և տանեմ ցըրեմ հայոց դաշտերում, լեռներում բարձր, որ նորանոր քաջեր ծնւեն մեզ համար, որ Սպարապետի գործը շարունակւի միշտ, և խլճով, հոգով ազատ մնանք մենք:

ՎԱՍՍԿ

Բայց կարող են նրանց փոխարէն իմ հետևորդների հոգիները յայտնւել և սուր մագիլներով քեզ խեղդամահ անել:

ՇՈՒՇԱՆԻԿ

Դաւաճանների հոգիները շղթայաւած են գեհենի սիւնին, գնա՛, հեռացի՛ր, քո ներկայութեամբ մի պղծիր դաշտը այս նըւերական, իմացիր հաստատ քո ժամն էլ մօտ է...

ՎԱՍԱԿ

Յամառ: Ե՛կ, ե՛կ գնանք ինձ հետ: Ձեռքը մեկնում է
Շուռանիկի բազուկը բռնելու:

ՇՈՒՇԱՆԻԿ

Ձգլանմով: Գնա՛ դու դժոխք, ես այնտեղ չեմ գալ:

ՎԱՍԱԿ

Ամուր սեղմելով նրա բազուկը: Կը գա՛ս, կը գա՛ս, ար-
դէն դու քո ստքով ես եկել, ես քեզ կը տանեմ:

ՇՈՒՇԱՆԻԿ

Ուժգին: Թող ինձ ամբարի՛շտ: Բազուկն ազատում է վա-
սակի ձեռքից:

ՎԱՍԱԿ

Կասաղած առաջանում է դեպի նա: Հայրդ չընկաւ իմ
սուրից, շատ եմ ափսոսում, բայց դու կընկնես: Սուրբ պա-
սնանից դուրս է փառում յարձակում է Շուռանիկի վրայ, ըն-
դոս իր դեմ է բարձրանում վարդանի ուրականը: Վասակը
սարսափահար նշում է: Դեռ կենդանի ես դու, թէ վերադար-
ձե՞լ ես միւս աշխարհից...

ՎԱՐԴԱՆԻ ՈՒՐԻԱԿԱՆԸ

Ես կամ ու կը մնամ այս հողի վրայ, յար ու յաւիտեան:

ՎԱՍԱԿ

Ես կը վանեմ քեզ, իմ այս հողից ես քեզ կը ջընջեմ:
Սուրբ փառում է ուրականի վրայ: Ուրականը փչում է, սու-
րը վասակի ձեռքից ընկնում է ցած:

ՎԱՐԴԱՆԻ ՈՒՐԻԱԿԱՆԸ

Այս հողը քոնը չէ, քեզ չի պատկանի երբէք, գնա՛, դու

զնա Տիգրան, խոնաւ զնդանում դու փթիր դանդաղ, և փոշիդ
խառնիր օտարի հողին... Գնա'...

ՎԱՍԱԿ

Փախչելով: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, դերեզմանում անդամ
այս մարդն ինձ հանգիստ չի տալու, մեռելներն անդամ հա-
լածում են ինձ: Փախչում, մտնում է վրանը:

ՇՈՒՇԱՆԻԿ

Որ մինչեւ այդ շուր կանգնել էր, յանկարծ հայեաց-
քը րնկնում է խոտերի մէջ պառկած հօր դիակին, երկիւղած
ծնրադրում է, հօր հակասն համբուրում: Հա՛յր, Սպարապե՛տ Հա-
յոց, դու կենդանի ես, կենդանի պիտ մնաս միշտ, բոլորի սըը-
տո՛ւմ, բոլորի հոգո՛ւմ, յա՛ր յաւիտեա՛ն:

Շուշանիկը լալիս է եւ օդը լցում է օրհներգի մե-
ղեղիններով:

Արեալոյսը ոսկեգօծում է Մասսի գագաթը եւ սեսարա-
նը փակում է դանդաղ:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

1963, Թեհրան

ԴԵՈՐԳ ԴԱՐՅԻ